

# ՈՒՍՈՒՄՆԱԱԽՐՈՒԹԻՒՆ, ՇԱՐԱԿԱՆ, Ո. 8

**ՓԵ) Սուրբ Ներսէս Շնորհալի:** Շարականների ցանկը Շնորհալուն վերագրում է պահանջան աւագ օրհնութեանց, ըզնեթանասնիցն, զնինուէացւոցն, զաղու-

հացիցն, ամ. կիւրակէիցն, զՄազկազարդի հարցն և լն. ։

Համեմատաբար դնենք շարականների ցանկում ն. Շնորհալուն վերագրուածները և Գոնձակեցու ասածները,

## Շարականների ցանկերը

- 1) զվար ձայն աւագ օրհնութեան, 2)
- զՅօրանասնիցն, 3) զՆինուէացւոցն, 4) զարգանացիցն, 5) ամենայն կիւրակէիցն, 6)
- զՄազկազարդին հարցն, 7) զՀոգւու Գալըստեան չորս պատկերուն, 8) զՎարդագառի երկու պատկերուն, 9) զՅօնաննուդա. հարցն, 10) զԲարգարէից դա. հարցն,
- 11) զԵթեազապեաց, 12) զՆորահաւան Վարդաննանց, 13) զՀեռնդեանցն, 14) և զայսօր անձառն, 15) զՆորոգոզն, 16)
- զԱճ անեղն, 17) զԱրարչականն, 18) զԱրեազալի շարականն, 19) զՕրհնեմք բզեզն, 20) զՆույիաց սիրովն, 21) և զՌքէն հայցեմքն, և ըստ ոմանց (22) զուրբ Յակոբայն սորա է ասացեալ,

Գանձակեցու յիշատակածները

շ... Բազում ինչ կարգեաց յեկեղեցի քաղցը եղանակու Խորովէեան ոճով շարականն և մեղեդիս և տաղս ստանաւորս, քանզի նորա է.

- 1) Յարութեան օրհնութիւն երրուգիոլմն,
- 2) Աճածնի փոխման երկուց աւուրցն, 3)
- Պիտրոսի և Պօղոսի օրհնութիւնն և մահկունքն և համբարձիս, որոյ սկիզբն է Ցնծա' այսօր ս. եկեղեցի, 4) և որդւոց Որոտմանց օրհնութիւնն ուր էն յէռւթեան որդին, 5) և շարական մի Անտօնի և 6) երկու Թէոդոսի, 7) և մի առաքելոցն, 8) և աւագ շաբաթին երից աւուրց օրհնութիւն ԲՀ. ԳՀ. և ԳՀ., 9) երկու շարական յորութեան ձաշու, 10) Նինուէացւոցն, 11) և Եթեազապեաց, 12) և Մրցոց Վարդաննանցն և բազում շարականն: Արար նա քարոզս սրբոյ պատարագին քաղցը եղանակու և տունս շարականաց նմին խորհրդաբար . . . (Կիրակոս Գանձակեցի, էջ 66-67):

Վերոյիշեալ երկու աղբիւրների մէջ միանման յիշատակուած են յարութեան վառ ձայն օրհնութիւն, Նինուէացւոց, Հրեշտակապետաց և Վարդաննանց:

Մի կոզմ թողնելով մատհնագրի ցուցմունքը, որովհետեւ Գանձակեցու թուածները բոլորը ճիշտ են, տեսնենք Շարականների ցանկում յիշատակուածներից էլի որոնք են ն. Շնորհալունը բացի այդ չորսից: Նախ այն շարականները որոնց վերայ մակագրուած է աերգ Տն. Ներսիսի շնորհալույց և այն երգերը, որոնց սկրզբառակերը կազմում են անունն Ներսէս. առաջիններից և երկրորդներից են՝ Այսօր անձառ, ԱՃ անեղ, Արարչական, Օրհնեմք բզեզ, Յարեկից, Ճգնաւորք, Լոյս Արարիչ լուսոյ, Ճանապարհ, Նահապետին

Արրահամու, Նորոգոզ տիեզերաց, Նայեաց սիրով, Նորաստեղծեալ, ի քէն հայեմք, Նոյն և նման, Հոգւոյ գալստեան երրորդ աւուրց օրհնութիւնը: Իսկ ցանկի միւս յիշածները կարող են ն. Շնորհալունը լինել ունենալով միւնոյն ոճն, լիզուն, բառերը, գաղափարը և լն. .

Որպէսաւե ն. Շնորհալին ունի տաղեր Աճածնի Վերափոխման, Աւետեաց, Ճրագալուցի Մննդեան, մկրտութեան, յորութեան Ղազարու, Մազկազարդի, մեծի ուրբաթու, 'ի խաչելութիւն Տեառն, 'ի յարութիւն Տն., Ս. Երրորդութեան, Վարդագանի, 'ի փոխումն Կուսի, Խաչի, որբոցն հրեշտակապետաց, և ամենայն երկնային զօրացն, 'ի ս. առաքեալսն, 'ի ս. մարգարէսն, սրբոց հայրապետաց,

Յովհաննու Կարապետին, որդոցն Որոտածն, Նախագիտային, 'ի ս. լուսաւորիչն, որոնցից մի քանին համեմատելով մերոյ նման գաղափարով, մոռզով, լազուլով, ոճով իւր գրած շարականներին, ուստի կարելի է ասել որ շարականների ցանկում յիշտառկատած երգերը բոլորը և. Շնորհալուն են:

Ներսէս Շնորհալին ժամագիրքը կարգաւորեց, նորա մէջ մտցրեց իւր շարադրած երգերից շատերը, որոնք այժմ երգում են գիշերոյին, տուաւտեան, նաշու և երեկոյեան պաշտաման միջոցին:

ԱՄՐԱՐ ԿԱ 〔Ն. Ծ.〕 ԵՐԳԱ և ՈՒՍՈՎՑ ԲԱԿ ԱՅՆՈցիկ ՈՐՔ ՊԱհԷին զբերդն (Հռոմեական), զի փոխանակ վայրապար ձայնիցն զայն ասացեն, որոյ սկիզբն է 'ի սովորմասէն Դաւթի այիշեցուք 'ի գիշերի զանուն քո Տէրը և այսպէս խորհրդաբար ըստ կարգի օջարթիք փառք իմ՝, որ այժմ ասի յեկեղեցի 'ի ժամ գիշերային պաշտաման, էջ 67, Գանձ. Կիր.։

ԲԱԼՈՐ Վերոյիշեալները կապացուցանն, որ Ն. Ծ. գրել է ստուար քանակութեամբ հոգեսոր, հոգերուղին և հիմաքանչ երգեր։

ԺԶ) Միւս հեղինակներից Ներսէս Լամբրոնտցին յօրինել է «Այսօր յարեաւ», «Նորոգեալ կղզիք», «Որ զոյշ»։ Աւանդութիւն կայ, որ իւր Հեթում եղրօր շինած եկեղեցու օծման ժամանակ յօրինել ե երգել է «Նորոգեալ կղզիք»։

ԺԷ) Գրիգոր Սկեւուցին ըստ աւանդութեան գրել է «Արեգական արդարութեան շարականը»։

ԺԸ) Խոկ Խոչաւուր Վարդ. Տարօնացին Շոյրնուրդ խորին, որը երգում է այժմ էլ Պատարագի սկզբին և որի աների սկզբնաւառերը կազմում են Խաչառու անունը։ Այս երգը հիւսել և երգել է այն ժամանակ, երբ Զօքարիս Սպասաւորի հրամանով պիտի զգեստաւորուիլ պատարագի համար յունական եկեղեցական զգեստաներով։

ԺԹ) Վարդան մեծ Վարդ. Թարձրեւոյցուն վերաբրուցմ է ՈՈՐ Նախիմաց», որը երգել է Կիլիկիայում եղած միջոցին։

Այս մասին մի անգամ էլ ակնարկել ենք։ Բարձրերդցուն ևն ո՛ի յանահման ծովէնց, «ՈՐՔ զարդարեցին» (Թարգմանչաց) և Ս. Մարգոի օրհնութիւն՝ «Ամենասուրբ երրորդութեանն ընտրեալ ծառայա»։

Ի) Յակովի Վարդ. Կլայցիի, Երգեցէք որդիք», որ Մարիամ Ածածնի ծննդեան համար է գրուած։ Հաւանական է, որ այս տօնը սրա օրօք մտած լինի Եկեղեցու տօնակատարութեանց մէջ, որովհեակ այս տօնի շարականների մէջ մի հատ հին երդ չկայ։ Եւ այս հանգամանքը մեզ կարծել կը տայ այս տօնի ուշ մտնելը Եկեղեցու տօների մէջ։

ԻԱ) Պալիհաննես Վարդ. Պլուզին շարականների ցանկը նուրիում է «ՈՐ զոյշ» անձաւ, Լուսուորչի «Այսօր զուարձացնեալ» և Ալեքրինք ամենայն, եօթն Խոտածարակացն «Յաւուրց վերջին», «Յայս յարկ նուրիանաց»։

Ս. Ներսէսի կանոնի Տէր յերկնիցը հետաքրքիր է յառաջ բերել, թէ ի՞նչ դրութիւն է ներկայացնում։

1. Այսօր զուարձացեալ տօնեն երկնայինքն ընդ մարդկան պարակից եկեալ փրկութեան մերոյ, քանդի յայտնեցաւ մեզ հոգեսոր . . . պարզեան՝ զիսազալութիւն Հայաստանեայց աշխարհի։

2. Այսօր վերստին նորոգեցաւ քանայական գաւազան գեղեցկապէս ծաղկեալ պայծառութեամբ, քանդի շնորհցաւ հոգիւն քաջ բանաւոր հօտի յարմատոյ Հաւատորչիւն . . .

3. Այսօր մեծապէս փառօք ցնծայթագաւառական գաւազանն ընդ հաշտութեան սիրոյ որ. հայրապետին, քանդի ենա ՚ի յօգնութիւն . . .

Այս երգի մէջ ներկայացրած է թագաւորի և հայրապետի հաշտութիւնն ու յարաբերութիւնը։

Յովհաննէս Պլուզին է «Յամենայն ժամ օրհնեմք», Այսօր ձայնն հայրական Զօքինեաց երգերը։

Ի յ Կիրակոս Վարդ. Մրգնկացի համկառանդին Երգնկացի։ Սորու մասին խօսեցինք շարականների խմբագրութեան մասին. խօսելիս։ Սորու է Ալեքելք Գերտարփին, որի վերջին տան առղերի սկզբանից համառակառ կիրակոս անունն են կազմում։

Հայր Ղ. Ալիշան Գրիգոր Կաթ. Անաւարդեցու մասին պատմելիս, Սիսուանում յիշում է նորա 33 կանոնները, բայց թէ ինչո՞ւ շարականների կարգը չեն մտել սորտ գրուածքները, կարծում եմ պատճառը իւր հանսծ կրօնական խնդիրները պիտի լինին:

Անհետաքքիր չի լինի յառաջ բերել Սիսուանի այս մասին ցուցմունքը և շարականների վերտառութիւնները:

«...միւս գրաւոր և ոչ աննշան գործք Անաւարդեցոյն են՝ շարականքն, աւելի քան զերեսուն կանոնքն ի յաւելուած տօնից և մեծ մասն չափուկան բանիւ, որոյ եթէ չիք վսեմուկան ոճ նախնի շարականաց, ոչ պակասեն իմաստք զեղեցիք պարզագոյնք և հոգինոսք, հանդերձ վայելուն հիւսուածով, յուրովից անագլուխ դասք կապին զանուն իւր և զինդրողացն, որ են կոստանդին թագաւոր և Հեթում, մերթ այսու և մերթ կրօնաւորական Յովհաննէս անուամբ նորին, երբեմն տնակապեալ և Յովհաննէս տէրն, որ նախ արքայն Հեթում, և երբեմն Յովհաննէս թագաւորահայր և Լևոն արքայ ընկալիքը ոմանց վերտառութիւնն նուիրեալ առ երգիչսն սուրբս, որպէս Կիրիգորիսի առ Գէորգէոս վկայ։ Արքեալ է և երիս երիս շարականն Ծննդեան և Յայտնութեան, յառանձին աւուրս զատուցեալ զտօնսն ըստ Լատինաց. Աշանաւոր ինձ թուրի և յոյժ վայելուչ թուրի կանոն ՚ի սկիզբն այսոցիկ շարականաց իրեւ նախներդան ինն կարգեալ և պարաւութիւն Ճրագաւոյցի աւուրս որպէս տեսցի ստորեւ, Սիսուան, էջ 241. Ահա այն ցանկը, որ յառաջ է բերում Զ. Ալիշան։

Շարականք Գրիգորի կաթողիկոսի Անաւարդեցոյ.

1) կանոն Անարատ Յղութեան Ս. Ածածնի, 2) Ընծայման Ս. Ածածնի, 3) Ճրագաւոյցի, Մկրտութեան և Յայտնութեան, 4) ա աւուր Ծննդեան, 5) բ աւուր Ծննդեան, 6) գ աւուր Ծննդեան, 7) Ճրագաւոյցի Մկրտութեան, 8) ա աւուր Յայտնութեան, 9) բ աւուր, 10) գ աւուր, 11) Թլփառութեան Յի., 12) Ամենասուբը Երրորդութեան, 13) 14) 15) Աւագ օրեն. բշ.

գչ. և գչ., 16) Ամենային սրբոց այբուբենական, վերջին երեք տունքն նուիրեալ են Ամենայիցն, քանզի առ Լատինս 'ի նմին աւուր (1 Նոյեմբերի) կատարի տօն ամենայն սրբոց, 17) ՀԲ. աշակերտացն, 18) 19) 20) Մատթէոսի, Մարկոսի և Ղուկասու աւետարանչացն, 21) 22) Անդրէի և Թովմայի առաքելոցն, 23) Ս. Բարողի, 24) Գր. Ածաբանի, 25) Սրբոյն Լէոնի Պատին, 26) է. Փաղովոյ, 27) Ս. Նիկողայոսի, 28) Ս. Գէորգոյ զօրավարին, 29) Թէոդորոսի Ստրատելատի, 30) Թէոդորոսի զօրավարին, 31) Մերկեսիոսի, 32) Տարագոսեանց, 33) Յովհ. Ոսկերերանի։

Ձեռագիր շարականների համեմատութեան և ուսումնասիրութեան ժամանակ Նջ 1606 գրչագրի մէջ Պէլ (1412) թուագիս ունեցող և որը գրուած է 'ի գիւղն Ուլիսցիսիւէ (հաւանօրէն Վրաստանում) գտայ Տարագոսեանց շարականը. Հաւանական է կարծել որ այս գրոծը հէնց Անաւարդեցու գրածն է։

Ազգային բանաօիրաց գուցէ մասամբ օժոնդակած լինիմ, եթէ յառաջ բերեմ այդ շարականը։

#### ԾԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԳՈՏԵԽԵԱՆՑ (Պ.Ա.)

1. Տենչալի տաւնին սրբոցն զուարձանան այսօր Եկեղեցւոյ մտնկունք տաւնելով զյիշատակ Տարագոսի քաջ և արի յաղթող վկային, որ է պսակեալ արեան իւր հեղմամբ։

2. Պայծառանայ Սիօվի Մայր Եկեղեցի, յիշատակաւ սրբոյն Պրոռոսի, որ ի մարտի անտարինացն(\*) արիաբար յաղթեաց ամբարիչաւ արանցն և է առ ՔԱ. Փառաւուք պսակեալ։

3. Անարատ գառինն հաւը բարձաւլին մեղաց անշաշահոտ զանձն ողջակիզեաց երանելին Անդրոնիկոս որ զերկնայինն խորհելով չարչարեցաւ վասն Քի. թագաւորիով ընդ նմա յերկինս։

4. Մաղթանաւուք սոցա, Տէր, մեզ ու զորմեա և սպասաւորաց սոցա սովերաց սրբ պարակից երկնաւորաց տաւնախմբեմք զյիշատակ սոցա, ցնծութեամբ ընկալ զմեզ յերկնային խորանսդ։

(\*) Անատին կամ ազդի անուն է և կամ կը նշանակէ անօրէն։

Այստեղ դնում ենք Մայր Աթոռի ընալիք և հինգ գրչակիր շարականների համաժառավթեան ժամանակ մեր գտած այն երգերը, որոնք վերջին խմբագրութեան և ապած շարականների մէջ չկան։ Մեր այս գիւղը կարող է օգտակար լինել հմուտ բանասէրներին։

### ԸՄՐԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍԱՅԻ

1. Հայր երկնաւոր, անկանիմ առաջի անխսակալ քո գթութեանդ, զի մեզաք իմովք բարկացնեցի, և չար առաջի քո արարի. աղաչեմք գեղ, ներեն յանցանաց իմոց որ միայնք եռ ողորմած։

2. Աքք անաւրէնք կոչեցին զիս հազորդիլ արեան մահու. գնացի զճանապարհն ձախակողմեանն, կատարեցի զչարիորհուրդ նոցա. աղաչեմք են։

3. Մեծ են յանցանք իմ, Տէր, զոր գործեցի յանէ մահու երամանաւ իսմայլեան բռնաւորին. երագեցի հեղուլ զարին եղբաւորն. աղաչեմք են։

4. Ած ապաւէն և յոյս գարձելոյս 'ի քեզ, յարենէ փրկեա' զիս, Տէր, սրպէս թողեր զայն երգողին, թող և ինձ ըզպարտա մեհղուցեալ քո ծառայիս. աղաչեմք են։

5. Մեղայ, Տէր, մեղայ, Մանասէի ձայնիւ գոչեմք, ընկալ զիս, մարդուէր, ընդ երանելեացն որոց թողան և ծածկեցան յանցանքն. աղաչեմք են։

Ինչպէս կ'երեկի տների սկրընատակերից և վերտառութիւնից, շարականս գրել է Համաժանուն անձը, իւր յանցանքների համար աղաչում է Ածուն և ինչպէս երեւում է, յանցանքը գործել է իսլամեան բռնաւորի երամանով։

### II

#### ԱՅԻ ՀԱՐԵ ԱԽԵՑՑԱՅԻ ԱՆ. Ս. ԽԱՆԻՆ

Ուրախ լեր Մարիամ, որ Ածածին, որ յորվայնի քում կրեցեր զեկը Ած հարցն մերոց։

Ուրախ լեր Մարիամ, կոյս անարատ, որ անձառապէս ծնար զորդին քո, զաէր Ած հարցն մերոց։

Ուրախ լեր Մարիամ, մայր Քի.;

Քանզի 'ի քէն ծագեաց մեզ լոյս երկասց Թո. Ած հարցն մերոց։

Էզտէր աւրէնսեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Զեկեալն այսաւը 'ի փրկութիւն ազդի մարդկան, մարդ եղեալ ճշմարտապէս, ընդ հրեշտակա աւրէնսեցէք են։

Հին աւուրցն մանկացեալ յանարատի Ս. Կուսէն և յանձն առ մկրտիլ ընդ հրեշտակա. աւրէնսեցէք են։

Գրուած է ժԴ., ժԴ. և ժԵ. Դարերի գրչագրերում, իսկ ժՁ. և ժՁ. Դարերի գրչագիր շարականներում չկայ։

### III

#### ԿԱՆԱՊՆ Ս. Ա.ՊՑՈՒԱՄՈՒՑԷԱԱՑ

1. Ած հզաւը և զբանչելի, որ ընտրեցեր քեզ սիրելի և ժողովորդ սուրբ արքայութեան Ապտուլմուսէն ծառայ Քրիստոսի. մաղթանաւը սորոս Քրիստոս խնայեա 'ի մեզ։

2. Թանաւոր շուշան հաւատի և աղաւանի տանն տէրունի ցանկայը այցին<sup>(\*)</sup> հացիւն կենդանի ըստ որոց մանկանցն քրիստոնէի. մաղթանաւք են։

3. Գեղեցիկ ազնիւ մանկանցն ժողովեալ ի ճաշի միջաւրէի ասէ և զինչ կամմի լինիցիմ խառնիլ ի կարգս ձեր ցանկալի. մաղթանաւք են։

4. Գառակցեալ երանելեացն Ապտուլմուսէի ծառայ Քրիստոսի շրջապատեալ գրին համբուրեն և բուրէր հաւա անմասնութեան որպէս կնդրէի. մաղթանաւք են։

5. Մրենցաւ յերանելեացն Ապտուլմուսէի ծառայ Քի. հայցէր մկրտիլ 'ի ձայն հրաշալի, Հայր և Որդի և Սուրբ Հոգի. մաղթանաւք են։

6. Քեզ պատանի գոլով բարի զաւակ ծնալզի ամբարշտի մերձեալ 'ի յունկո գինդ սոսի և տրձակեալ գաղանարարը զարիւն ենեղ 'ի վերայ վիմի. մաղթանաւք են։

7. Երեալ փրկին Յո. առ 'ի տես լինան 'ի գիշերի 'ի մէջ զրի տրժականի յայտնեաց զառուսւածութիւն իւր երան շալի. մաղթանաւք են։

(\*) Այսին թէ յազիւ Զեռագրում այցին է կարծում են զրողն է սիւլուել։

8. Հնդ անցանելն Արտաշի և այլազգի վաճառականի խռատանայր քեզ տասանորդի յոչ կամաի (9) ժողովներ զուղտ երաժակն առ քոյդ վկայարանի. մաղթահաւաք են.:

ինչպէս կ'երեի շարականիս բավանդակութիւնից, երգս նուրիրուած է Ապատուլուսէի վկային, որ հաւատացել է Քրիստոսին և մարտիրոսացել: Հաւանօրէն գէպէք իններորդ կամ Տասներորդ գարի է: Այս շարականը միայն № 1566 գրչի է: Այս շարականը միայն № 1566 գրչագրութն է որ ունի Ռիթ թուականը:

## IV

Հանգստան շարական, որ կայ № 1615 գրչագրութ, որ ունի թի (1451) թուական:

1. Հայր անսկիզբն անեղ անման անապական անքննին 'ի յէռութեան, քազցը և ներող երկայնամիտ միշտ, յիշեա զնոդիս ննջեցելոց մերոց և հանգո ընդսուրբ քո:

2. Որդիդ միածին բանդ 'ի Հաւրէ տուաքեցար, էիցն էացուցիչ և եղելոց գոյացուցիչ, յիշեա են.:

3. Հսդիդ ճշմարիտ կենդանութեան մարդկան տըւաւ ճշմարիտ խաղաղութիւն աղբիւր կենաց և լցուցիչ, յիշեա են.:

1. Արեգակն արդարութեան Քս. և ապաւեն յուսացելոց ՚ի քեզ, որ և զմեզաւք մեռեալ մարմինն կենդանացուցեր փրկիչ. ընկալ զմեր ննջեցեալուն և հանգո ընդսուրբ քո:

2. Առ քեզ կարդամք անձամբք բեկելովք և արտասուալից հոռաչանաւք, որ 'ի գերիշմանն Զազարու արտասուցեր. փրկիչ ընկալ են.:

3. 'ի քէն նայցեմք բղխումն ողորմութեան պարգևիչ կենդանութեան, որ աւազակին զդրախտն ժառանգեցուցեր, փրկիչ ընկալ են.:

№ 1573 անթուական մագաղաթեայ գրչագրութ, միազմերամք վեհագունիցն շարականի շարունակութիւնը կայ, որ զնում ենք ստորեն:

Աւրենաբանող ձայնիւ երգեմք քեզ 'ի բարձունս, Հայր անոխակալ, որ 'ի բոցեն զէն սրովքէից միշտ աւրենաբանիք:

լուելի ձայնիւ, հոգիք ննջեցելոցն աւանդի առ քեզ, վերահանգուցիչ սրբոց, հանգու և զմեր զննջեցեալուն ընդ սրբոց քուոց սիրողաց:

Անոխակալ սիրով քո, որդի Այ, համեցար բառնալ զմենոս աշխարհի քո խաչելութեամբն, հոգիք ննջ. են.:

Յաւէտ անշէջ մշտաշարժ հոսումն և անսպառ աղբեր, անձախաբար բարեաց կենդանուն վտակ և աղբեր բարութեան. հոգիք ննջեցելոց են.:

№ 1516 (Ռիթ թուականով) և 1615 (Թէ թուականով) գրչագիրներում հիազմերամքայց յետոյ գրուած է մեղեդի, որ յառաջ եմ բերում ստորեն:

'Ի հանդերձեալ նորոգմանն նորոգսքան նորահրաշ Գալստեան քո, Տէր, յորժամ նորոգին հողացեալ մարմինք և միաբանակին առաջի քոյին սոսկալի բեմին, յայնժամ թողութեան արա ինձ արժանի, զի մեղացեալ եմ անձամբ և ես գտից 'ի քէն զմեծ զողորմութեան չնորհ, զի դու միայն ես Տէր իմ և Աստուած:

Մշտակայծառ լուսով զարդարին եռամք այսպահ դասուն 'ի բարձունս հետեւեալ երկնաւոր փեսոյին և յայնվալճան ուրախութիւնս միշտ զուարձացեալ հրձըւին. յայնժամ թողութեան են.:

Երանաւէտ բարբառոյ քո հանդիպիլ բարեացդ արժանացեալ լինին, վերանալ համբարձմամբ ընդ հրարուն սոնիցն և եղկելի կացեալ միան լքեալ դասուցն ձաւխակողմեանն գունդք առաքմամբ 'ի կորուստ յաւիտենական և անվաղճան տանրանմամբն կորնչին. յայնժամ են.:

№ 1598 գրչագիր շարականում կայ հետեւեալ շարականը, որ վերտառուած է նարական խնկարկութեան յառաջ հան զՊատարագ:

1. Մշտածուխ խնկոյն լուսով փայլածուաւեալ, որ 'ի բնութիւնս շնորհ առգրեցեր ծաղկեալդ 'ի բնաւս ընդ մեզ ԱԾ. բանդ 'ի յէն դաւանիմք ԱԾ ծնընդեամբ աւետաւք 'ի կուսէդ զիթիսուն ընդ մեզ՝ յայնութեամբ սրովքէիւք զաւծեալդ առ միտս բնակեալ. զոր զաւրինեալդ 'ի մէնջ մեծացուցանեմք:

## Ի Ն Ք Ն Ա Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի ՒՆ

### Մ Ե Ր Ո Վ Բ Ե Կ Վ Ր Դ Ի Ս Ա Մ Ա Ր Ո Ւ Յ Ա Ն Ի Ն

Աշնան վերջիրը՝ Արիմեանի երրուսաղէմ ժամանումը:

1891 Ապրիլ 16, Գլ. ժամը 7.30ին, յանկարծակի վախճանմամբ առ Աստուած փոխուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Մակրո Ա., որոյ թագման հանդէսը կատարուեցաւ յետո Ապրիլ 22, Զատկի ԲՀ. օրը: Գերեզմանը կը գտնուի Ս էջմիածին տաճարին արտաքին դրան ձախակողման սեռ մօտ:

1891 Մայիսի 1, Դշ. Այսօր իբրև շրջանաւարտ ելայ և մեկնեցայ ժառանգաւորաց Վարժարանէն: 13 ընկերներ էինք, մէկը՝ Զէյթունի Յովհաննէս վարդանան կամ Գամբ Գամապեան, իր յօժար կամոք վարի գամարանը իշաւ և տարի մը ես մնաց ի վարժարան: 12նիս էինք հետեւելները: —

1) Մկրտչ Տ. Պետրոսեան, Մագցի (Արտակիր), (Վարժապետութեամբ կը զբաղի):

2) Բարբեռլիմէսս Ն Կարմիրեան, Շապին-Գարահիսարցի: (Յերիշասարդական հասակի վախճանեցաւ):

3) Միհրան Նշանեան, Կ. Պոլսեցի: (1898ին վրդ. ձեռնադրուեցաւ Մեօրոպ անունով):

4) Պուրքէն Սամուէլեան, Թալոսցի, գրիւը:

5) Գէորգ Պշտքէնեան, Թէքիրտաղցի: (1912ին վարդապետ ձեռնադրուեցաւ Արմաշ՝ նոյն անունով):

6) Պետրոս Թուր-Մարգիսեան, Հաճընցի: (Յետոյ վրդպտ. ձեռնադրուեցաւ 1894ին ի Սիր՝ Հեռոնդ անունով և վախճանեցաւ 1909ին ի Կ. Պոլիս):

7) Կորտապետ Օզանեան, Շապին-Գարահիսարցի: (Բժիշկ ելաւ Պէյրութի Ամերիկան Վարժարանէն):

8) Յակոբ Մազլըմեան, Ակնցի: (Բահանայ ձեռնադրուեցաւ Ներսէս անունով):

9) Պետրոս Մազմեան Անջրդեցի (Արտակիր): (Վարժապետութիւն կ'ընէ):

10) Յարութիւն Աստուածատուրեան, Պանարբացի: (1910ին մեռաւ Աթէնք):

11) Անդրանիկ Վարժապետեան, Գարամանցի: (1907ին մնաւ Իզմիր):

12) Պետրոս Մարտնեան, Սիվրի-Հիսարցի: (1898ին վրդ. ձեռնադրուեցաւ Պետրոս անունով: 1914ին Հաճընի թիմիրն վրայ հպու: ձեռնադրուեցաւ ի Սիր Տ. Սահակ Կաթողիկոսէն): (1940ին ընտրուեցաւ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ ՀԱՆ-Թիլիս և վախճանեցաւ քառամսեայ գամակալութենէ մը ետք — Ծ. Ա.):

Մեզմէ երկութը 1 և 3 վարժապետական պաշտօնով մնացին ժառանգաւորաց Վարժարան (ի Զամ-Թաղ), իսկ առներնիս փոխադրուեցանք Իզմիր-Թաղ և սկսանք իբրև միհրան դպիր պաշտօնավարել: ամէն օր առտու երեկոյ ի Սր. Յակոբ Պարական պաշտօն կը վարէինք, կարգաւ. Ս. Աստուածածինքին կ'իրթայինք ի սպասարու-

2. Ամեան ծննդոցս ցաւզ միհրաման պաշտօնով մնացին ժառանգաւորաց Վարժարան (ի Զամ-Թաղ), առ ՚ի ասւիզս փողոցն հնչեցար առ մեզ կուսին զքեզ արտրչակրաւզ, արրումն ՚ի հաւրէ առ ոգիս որ ակ զդիրդ ՚ի հոգւոյ իմաստացուցաւզ զոր ՚ի խաչին առգրեցար յԱնձութեանդ զմիտ քոյաց միզ ՚ի թողութիւն, զոր աւրէնողդ ՚ի մէնջ մեծացուցանեմք:

(Վերջ՝ 10)

3. Բատմամբ առ քեզ սրտիւ պաղա- տիմք մայրդ Ամածին, ՚ի հաւրէն լուսոյ հայցեցան յՈրդույդ Այ, զմեր զմաքրու- թիւն ՚ի նա մասնութեամբ համբարձցիս զմեզ առ հրաշագեղ ամպդ արտափայլումն յարքայական կառսդ սաւառնիս զնողի Բարոզի, միջնորդ Տէրունոյ, զոր զաւրին նեալդ ՚ի մէնջ մեծացուցանեմք:

ՎԱՀԱՆ ԲԺՇԿԵԱՆ